Արձանագրություն N 2

**«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

ք.Երևան, Բուռնազյան 37,
«Կրթական տեխնոլոգիաների
ազգային կենտրոն» ՊՈԱԿ

06.12.2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Կուլախսզյանը, հանձնաժողովի անդամներ՝ Արաբու Մարքարյանը, Համիկ Իփեքչյանը և քարտուղար Լիլիթ Գևորգյանը:

1. <u>**Տեղեկություններ հայտերի բացման մասին**</u>

Հայտերը բացվել են հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին: Հանձնաժողովի նախագահ Ա. Կուլախսզյանը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գները՝ մեկ թվով արտահայտված՝

| Չ/Հ | Անվանումը | Գինը<br>(ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Դյուրակիր համակարգիչ-3 | 880000 (ութ հարյուր ութսուն հազար) |
| 2 | Պլանշետային համակարգիչ -1 | 240000 (երկու հարյուր քառասուն հազար) |
| 3 | Պլանշետային համակարգիչ -2 | 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) |
| 4 | Տպիչ | 160000 (մեկ հարյուր վաթսուն հազար) |

2. <u>**Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին**</u>

Հանձնաժողովի քարտուղար Լ. Գևորգյանը հայտարարեց, որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից և հանձնաժողովի նախագահ Ա.Կուլախսզյանին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտը.

*1/ «Կոմպգարանտ» ՍՊԸ – ք. Երևան, Վարդանանց փակուղի, 8շ., հեռ. 043 660 667, էլ. փոստ <u>info@compgarant.am</u>*

3. **Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

***«Կոմպգարանտ» ՍՊԸ՝***

*ա/ հայտը պարունակող ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան, - **բավարար***

*բ/ առկա են հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան –**բավարար***

*գ/ ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին*

*- 1-ն չափաբաժին – **բավարար***

*- 4-րդ չափաբաժին - **անբավարար***

*Ընդունվել է որոշում՝ կողմ –3, դեմ – 0:*

**3. Մասնակցի առաջարկած գինը**

1. **«Կոմպգարանտ» ՍՊԸ**

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | Գինն առանց ԱԱՀ (դրամ) | Գինն ԱԱՀ-ով (դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Դյուրակիր համակարգիչ-3 | 699200 (վեց հարյուր իննսունինը հազար երկու հարյուր) | 839040 (ութ հարյուր երեսունինը հազար քառասուն) |
| 4 | Տպիչ | 156400 (մեկ հարյուր հիսունվեց հազար չորս հարյուր) | 187680 (մեկ հարյուր ութսունյոթ հազար վեց հարյուր ութսուն) |

4. **Հանձնաժողովի նիստը կասեցնելու վերաբերյալ**

- Քանի որ 4-րդ չափաբաժնի համար գնային առաջարկ է ներկայացրել միայն «Կոմպգարանտ» ՍՊԸ-ն և ներկայացված գնային առաջարկը գերազանցում է նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5) ենթակետը և «ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.6 կետի գ/ պարբերությունը, ծանուցեց «Կոմպգարանտ» ՍՊԸ-ին, որ Համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով 4-րդ չափաբաժնի համար գների նվազեցման վերաբերյալ բանակցությունները տեղի կունենան 2019թ. դեկտեմբերի

10-ին ժամը 12:30-ին, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում, ք. Երևան, Բուռնազյան 37 հասցեում:

Հանձնաժողովի նիստը շարունակվեց 2019թ. դեկտեմբերի 10-ին ժամը 12:30-ին, ք. Երևան Բուռնազյան 37 հասցեում:

Մասնակցում էին `

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Կուլախսզյանը, հանձնաժողովի անդամներ՝ Արաբու Մարքարյանը, Համիկ Իփեքչյանը, քարտուղար Լիլիթ Գևորգյանը:

5. **Նոր գնային առաջարկների վերաբերյալ**

**4-րդ չափաբաժնի** վերաբերյալ նոր գնառաջարկ չներկայացվեց:

6. **Հայտը մերժելու վերաբերյալ**

Հանձնաժողովը որոշեց մերժել «Կոմպգարանտ» ՍՊԸ-ի հայտը 4-րդ չափաբաժնի մասով, քանի որ ներկայացված գնային առաջարկը գերազանցում է նախատեսված ֆինանսական միջոցների չափը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ –3, դեմ – 0:*

7. **Մասնակցի կողմից համապատասխան տեղ զբաղեցնելու վերաբերյալ**

Հանձնաժողովը որոշեց՝

- **1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել՝ «Կոմպգարանտ» ՍՊԸ-ին:**

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:*

8. **Ընթացակարգը 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ**

Հանձնաժողովը որոշեց չկայացած հայտարարել ընթացակարգը՝ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով, («Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ) քանի որ ոչ մի հայտ չի ներկայացվել և և 4-րդ չափաբաժնի մասով («Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ), քանի որ ներկայացված գնային առաջարկը գերազանցում է նախատեսված ֆինանսական միջոցների չափը և բանակցությունների արդյունքում «Կոմպգարանտ» ՍՊԸ-ն նոր գնառաջարկ չներկայացրեց:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0*

9. **Պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ**

Հանձնաժողովի նախագահի Ա. Կուլախսզյանն առաջարկեց օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքելու վերաբերյալ առաջարկ ներկայացնել **«Կոմպգարանտ» ՍՊԸ-ին՝** 1-ին չափաբաժին:
*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ ____________________ Ա. Կուլախսզյան

անդամներ՝ ____________________ Ա. Մարքարյան

____________________ Հ. Իփեքչյան

քարտուղար՝ ____________________ Լ. Գևորգյան

Հաստատված է

29 նոյեմբերի 2019թ.

Ընդամենը էջ

# Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

## ՀԱՅՏԵՐԻ

Պատվիրատուի անվանումը՝ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/06»

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Լիլիթ Գևորգյան (անուն, ազգանուն) Լ. Գևորգ (ստորագրություն)

# ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ

| հ/հ | Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունը, ազգանունը) | Մասնակց՝ այն գրության ելից և պատվիրատուի նույն գրության մտից համարները և ամսաթվերը, որով ներկայացվել է հայտը (Հայտը առձեռն ներկայացված լինելու դեպքում՝ այն ներկայացնողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը և համարը) | Հայտերի ստացման | | Հայտը գրանցողի ստորագրությունը | Նշագրումներ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Ամիսը, ամսաթիվը | ժամը | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. | «Կոմպզարգացում» [illegible] | [illegible] անձն. փաստ. 010902179 տրված 25.06.2019թ., 011-ի կողմից | 05.12.2019թ | 15:45 | [illegible] | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

| հ/հ | Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունը, ազգանունը) | Մասնակց՝ այն գրության ելից և պատվիրատուի նույն գրության մտից համարները և ամսաթվերը, որով ներկայացվել է հայտը (Հայտը առձեռն ներկայացված լինելու դեպքում՝ այն ներկայացնողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը և համարը) | Հայտերի ստացման | | Հայտը գրանցողի ստորագրությունը | Նշագրումներ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Ամիսը, ամսաթիվը | Ժամը | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

# ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ

| հ/հ | Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունը, ազգանունը) | Մասնակց՝ այն գրության ելից և պատվիրատուի նույն գրության մտից համարները և ամսաթվերը, որով ներկայացվել է հայտը (Հայտը առձեռն ներկայացված լինելու դեպքում՝ այն ներկայացնողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը և համարը) | Հայտերի ստացման | | Հայտը գրանցողի ստորագրությունը | Նշագրումներ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Ամիսը, ամսաթիվը | ժամը | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |